37				
38	Իսրայէլ վարդապետ Սաղիանցի . . .	1701	ռ.ճծ.	Ըստ աւանդութեան „Սիւնեաց Սաղիանցի“ մականուանեալ, որ նուիրեալէ վերին մասն այգւոյն.
39	Գրիգոր վարդապետ Շիրուանցի . . .	1707	ռ.ճծզ	Սա յուխտ գնալով 'ի ս. Կարապետ վանս Մշոյ՝ մնացեալէ անդ ց-1721 ամն, յորում ամի Յովհաննէս պատրիարքն Կ. Պոլսոյ հաստատելով զԳրիգոր վարդապետն պատրիարք Երուսաղէմի՝ առաքեալ է անդ, որ և յայանիէ շրջթայակիր անուամբ։
40	Աստուածատուր վարդապետ մատրասեցի շինող շեմարանին և նահատակն . . .	1715	ռ.ճկդ	Ըստ արձանագրութեան, որ 'ի ճակատ դրան շեմարանին և 'ի վերայ խաչքարի նահատակին։
41	Պօղոս վարդապետ .	1719	ռ.ճկը	Ըստ արձանագրութեան, որ 'ի սուրբ Նշան ուխտատեղւոջն Մէյսարի։
42	Յակոբ վարդապետ Շամախեցի, որ ապա յամին 1759 կաթուղիկոս *)	1726	ռ.ճկե.	Ըստ մայր ցուցակի գրադարանի ս. Էջմիածնի հ. 1700.
43	Մովսէս վարդապետ.	1734	ռ.ճձդ.	Ըստ արձանագրոյն Աջոյ Եղիշէ առաքելոյն, որ 'ի Սաղիանի վանս։

*) Շամախեցի Յակոբ և. կաթուղիկոսի գերեզմանը ս. Գայիանէի վանքի գաւթի մէջ է, որոյ վրայի տապանագիրն է.

«Քրիստոս որդի Հօր միածին
Դատող ազգիս մեր մարդկային.
Յորժամ գայցես փառօք կրկին
Առ 'ի դատել զամենեսին,